

Երիտասարդական Բանկ
Առաջնորդություն. Գևորգ Տեր-Գաբրիելյան
Դեկտեմբերի 25, 2015

Ես հիշեցի, որ երբ որ ես եկա էս հիմնադրամ, 2008 թվին էր, իսկ ես մինչ այդ երկար տարիներ արտասահմանում էի ապրում, ինձ անընդհատ ասում էին՝ երիտասարդական ծրագիր, երիտասարդական ծրագիր: Մենք ունենք շատ լավ երիտասարդական բանկ: Ես հենց նոր նաև ձեր նախորդ բանախոսի հետ էի խոսում՝ Քնարիկի, և ինքն էլ էր ասում, որ իր՝ երեխա, երիտասարդ ժամանակ ակտիվ չի եղել: Չնայած մենք տարբեր սերունդներ ենք, բայց ես էլ ակտիվ չեմ եղել, որովհետև մեր ակտիվությունը կոմերիտիությունն էր կառավարում, իսկ ես էդ գաղափարախոսությունը, պարզ ա, որ տանել չէի կարողանում: Սուտ էր արդեն լրիվ էդ գաղափարախոսությունը, դրա համար չէի մասնակցում, մինչդեռ իրանք շատ լավ ու հետաքրքիր կյանքով էին ապրում՝ շին. ջոկատ, արշավներ, ծառատունկ, շին. ջոկատ Ռուսաստանում: Կոնիվ էին տալիս շին. ջոկատը Ռուսաստանում գնալ, որովհետև և՛ փող էին աշխատելու, և՛ ռուս աղջիկների հետ ընկերություն էին անելու:

Դահլիճ 1:20 Հայերը ավելի լավն են:

Գևորգ 1:23 Հայերը լավն են, բայց ռուսները ավելի բարյացակամ են դեպի ազատ շփումը սողանների հետ: Եվ դա մեր ժողովրդի ու ռուս ժողովրդի սիմբիոզի հարաբերությունների, փոխհարաբերությունների շատ խորը պատճառներից մեկն ա: Դուք կարծում եք՝ մենք Պուտինին ե՞նք սիրում: Չէ, բայց կարող ա՝ եթե աղջիկ ես՝ սիրես: Հարցը էդ չի: Հիմնականում ուրիշ պատճառներ են: Ուրեմն էդպես ես բաց եմ թողել էդ ակտիվիզմը: Գիտե՞ք՝ սովետական ժամանակ բակում ամռանը ճամբարներ էին անում: Էդ ամեն ինչը կոմերիտական պիոներական անտուրաժով: Հիմա էլ են անում, մի քիչ ուրիշ և էդքան մաշտաբային էլ չի: Ու մարդիկ էին գալիս ակարդիոնով, նվագում էին, մեկ-մեկ փահլեվան էին բերում, և այլն:

Էդ ամբողջը անիմաստ էր ինձ թվում: Ու երբ որ ես եկա այստեղ, իսկ մինչ այդ էլ ես աշխատում էի ՀԿ-ների ասպարեզում, ու ես գիտեի, որ կան շատ լուրջ ու կարևոր երիտասարդական ծրագրեր՝ կրթական, կազմակերպչական, կարողությունների զարգացման, և այլն, և այլն: Եվ մտածում էի, որ ասենք, եթե մի ծրագիր կա, որտեղ հազարավոր երիտասարդներ էին մասնակցում, մեր փոքրիկ երիտասարդական բանկերի ծրագրերում հազիվ մի քսան-երեսուն հոգի ա մասնակցում, ի՞նչպես կարող ա ազդել և ի՞նչ արդյունք կարող ա ունենալ: Վերջը Գայանեն համոզեց ինձ, տարավ՝ ցույց տվեց՝ Երիտասարդական Բանկը ինչ ծրագրեր է անում, ու ես դրանից հետո սիրահարվեցի էս ծրագրին, բայց պետք է ասեմ, որ և՛ Երիտասարդական Բանկը, և՛ մեր գրասենյակը, մարդկանց մեծ մասը չէր կարողանում բացատրել, թե էդ ծրագրի օգուտը ինչն ա: Որովհետև ասում էին՝ երիտասարդները առաջնորդության հմտություններ են ստանում, գումար են բաշխում: Ես էլ ասում էի՝ ի՞նչ օգուտ, ի՞նչ ես դու ստանում, եթե դու գումար ես բաշխում: Տարօրինակ բան ա, քեզ գումարը տալիս են, ասում են բաշխի՛: Եթե քոնը լիներ, ուրիշ

պատասխանատվություն կունենայիր: Հետո ես հասկացա էդ ծրագրի բազմանպատակայնությունը: Էստեղ կարևոր ա ոչ թե փող բաշխելը, այլ որոշումներ կայացնելը: Մի բան ա, եթե դու որոշումների կայացման օբյեկտն ես, այսինքն քեզ ասում են՝ սենց բան արա, դու անում ես: Մյուս բանը՝ եթե դու սուբյեկտն ես, դու ես որոշում՝ ուրիշին ինչ ասել: Մի քիչ պուտինանում ես արդեն: Էդ իշխանության զգացումը իր հետ նաև պատասխանատվություն ա բերում, երբ դու ես որոշում: Ուրեմն, մի օգուտը էս ծրագրի էդ ա, որ դուք հիմա այստեղ, ինչքան ես հասկանում եմ, սովորելու եք, թե ինչպես որոշեք, որ ուրիշները ինչ անեն ձեր շրջաններում, ձեր շրջապատում:

Որոշում կայացնել պատասխանատու բան ա: Նույնիսկ ամենակոռումպացված մարդը, որը մտածում ա սսենք՝ էս գործը լավ, համեղ գործ ա, ու՞մ տամ: Իմ զարմիկին տամ, թե՞ մորաքրոջս տղային: Երկուսն էլ վատ վիճակում են: Էլի ինքը պիտի գցի-բռնի, թե ով ավելի լավ կաշխատի, ով իրան չի վառի: Այսինքն նույնիսկ ամենակոռումպացված դեպքում որոշում կայացնելը պատասխանատվություն ա պահանջում: Իսկ եթե կոռումպացված չես, ավելի կարևոր ա հասկանալ, թե ինչ օբյեկտիվ չափանիշների հիման վրա դու էդ որոշումը ոնց ես կայացնելու: Դա պատասխանատվություն ա նաև, որովհետև դու որոշումը կայացնում ես, որ էդ որոշումը կամ սխալ ա դուրս գալու, կամ լավ արդյունքի ա բերելու: Դու չես կարող միջամտել անմիջականորեն, բայց դու պատասխանատվություն ունես այնպիսի իրադրություններ ստեղծել, որ քո որոշման համար չափսուես, որ ինքը արդյունքը տա: Էդ էլ ա շատ հետաքրքիր: Այսինքն մարդը դառնում ա որոշում ընդունող անձնավորություն, մանավանդ երիտասարդը: Այսինքն զրոյից սկսելու փոխարեն, որ սկզբում դու ենթարկվում ես, հետո մի քիչ պատասխանատվություն ես ձեռք բերում, ինչպես սահուն կարիերաներում է, ընդհակառակը, դու միանգամից դառնում ես որոշում ընդունող, էստեղից ես տեսնում հարցերը ու լիքը բան ես հասկանում: Ինձ թվում ա՝ լիդերության կորիզը էդ ա: Դու պիտի ընտրես, թե էդ փոքր գումարը ինչի վրա ծախսես, որ ավելի արդյունավետ ու շահավետ լինի: Ես մինչև հիմա շատ-շատ Երիտասարդական Բանկի ծրագրերի արդյունքներ եմ տեսել, բայց երբեք չեմ մոռանա, ասենք Մևանի պարարվեստի խմբակի երեխաների՝ շորերը կարելու ծրագիրը, որ Մարտունու երիտասարդական բանկն էր աջակցել: Խնդիրը էստեղ այն էր, որ երեխաները գնում են խմբակ, խմբակը կա, շենքը կա, ուսուցիչը կա, բայց հարմար պարելու համազգեստ երեխաները չունեին: Փոքրիկներ էին՝ ձեզնից էլ փոքրիկ: Եվ մայրերը ասեցին՝ մենք կկարենք, մնում ա կտորը: Մենք անվճար կկարենք մեր երեխաների համար: Ու Երիտասարդական Բանկը էդ փոքրիկ գումարը հատկացրեց կտորը գնելու համար: Շատ գեղեցիկ՝ մեղվի պես պուտերով համազգեստ էր: Մինչև էսօր, համենայնդեպս անցյալ տարի տեսել եմ, որ իրանք էդ համազգեստով պարում էին: Այդ ծրագիրը մի քանի տարի առաջ էր: Շատ գեղեցիկ ու ճիշտ միասնություն էր էդ ծրագիրը:

Ճամբարակի վերևը մի հատ էլ Մարտունի գյուղ կա: Դու մի ասա՝ էստեղ մի կին ասել էր՝ ես երեխեքին փեթակագործություն կսովորեցնեմ: Ահա էդ փեթակը, իրանք են նայում մեղուներին: Ինչքան մեղր, որ ստացվեց, վաճառում ենք, և եղած գումարով երեխեքը կգնան Հայաստանով մեկ շրջագայության: Շատ փոքրիկ գումար էր ստացվել իհարկե, մի փեթակ էր, բայց իրենք գնացին Հայաստանով մեկ շրջագայության: Եվ այլն:

Էնքան լավ էդպիսի ծրագրեր են եղել: Ես հիմա բոլորը չեմ հիշատակի: Ու ես տեսա նաև, որ էստեղ հարցը այն է, որ նայած դու ում ես բացատրում, թե էս ծրագիրը ինչի մասին ա: Էնտեղ մի ուրիշ հանգամանք էլ կա, որ պիտի տեղի մեծահասակները ու պաշտոնատար անձիք համաձայն լինեն ու ուզենան նաև ինչ-որ բան ներդնել: Այս էս կինը, օրինակ, փեթակ էր հատկացրել: Եղել են դեպքեր, երբ ասենք ֆուտբոլի դաշտ են վերանորոգել և մետաղյա ցանկապատը հատկացրել ա գյուղապետը, իսկ ներկերը առել են Երիտասարդական բանկի կողմից: Էդ համագործակցությունն էլ ա շատ կարևոր: Ու հանկարծ մենք տեսնում ենք, որ որոշ մարդիկ, ովքեր գուցե էստեղ ներկան են կամ շատ մոտիկ են էստեղ ներկա մարդկանց, որ ինքը լինելով երեխա՝ հարգված տղա ա ու հարգված աղջիկ ա իրենց համայնքներում: Հարցեր ա լուծում, գործ ա անում:

Ուրեմն, երբ որ պետք ա ընդգծել երիտասարդների առաջնորդության կարողությունները, կարելի ա դա ընդգծել: Կա, սակայն, նաև մեկ այլ բան: Փոքրիկ ներդրումներով լուծել համայնքի հարցերը: Երբ որ պետք ա ընդգծել համայնքի հարցերի լուծումը, կարելի ա դա ընդգծել: Էդ երկուսը միասին են հանդես գալիս էս ծրագրի մեջ: Ինքը մեկ ծրագրով երկու շատ կարևոր ազդեցություն ա ունենում: Եվ մյուս հանգամանքը՝ իրա էֆեկտիվությունը: Այսիքն, քանի որ դուք կամավոր եք դա անում, իրա ծախսը շատ փոքր ա՝ մենակ էդ գրանտերին ա գնում: Մովորաբար ծախսը ունի էդ overhead կոչվածը՝ էն մասը, որը գնում ա կազմակերպելու վրա, մենեջմենթի վրա, և այլն, և այլն: Դա չկա: Կամավորության շնորհիվ փոքր ծախսով՝ 300 դոլար, 700 դոլար, 100 դոլար, եղել ա 50 դոլար: Էդպիսի փոքր-փոքր ծրագրերով լինում ա ակնհայտ, ակնառու արդյունք, և ի միջի այլոց այդ զարգացման արդյունքները շատ շահավետ են նաև անհատ գործարար-բարերարներից հավելյալ գումար ստանալու համար, նաև սփյուռքի առումով: Օրինակ էս էստեղ տեսա, որ ինչ-մեկիդ պայուսակը Արի Տուն նշանը ուներ վրան: Ուրեմն դուք կապ ունեք էդ ծրագրերի հետ: Շատ հաճախ է եղել, որ էդ մարդիկ գալիս են, սփյուռքի երիտասարդները գալիս, այցելում են, տեսնում են, որ սենց ծրագիր կա, ասում են՝ մի քիչ էլ մենք ենք ուզում գումար ներդնենք: Եվ էդպես էդ պրոցեսը սկսում է զարգանալ:

Դա որպես նախաբան, ես ուզում էի ասել, որ այդ պրոցեսը շատ հետաքրքիր պրոցես ա, շատ հետաքրքիր ծրագիր ա, և էս ձեզ նաև մի քիչ նախանձում եմ, որ գնալու եք, փնտրեք, թե ինչ ծրագիր կարելի ա իրագործել: Բայց էս շատ ուրիշ բաներ էլ ունեի ձեզ հետ խոսելու: Հիմա անդրադառնամ Գայանեի ասածին հարցեր տալու վերաբերյալ: Ես մոտավորապես 4-5 բան ունեմ ասելու: Առանձին- առանձին կասեմ, ամեն ասելուց հետո հարցեր և կոմենտարներ կընդունեմ ձեզանից: Էս ասածիս վերաբերյալ կա՞ն ինչ-որ հարցեր կամ կոմենտարներ: Անցնենք առաջ:

Ուրեմն շատ հետաքրքիր մի խնդիր կա մեր աշխարհում, որը մարդիկ լավ չեն պատկերացնում ու չեն հասկանում: Էդ խնդիրը *քաղաքացիական հասարակություն* հասկացությունն ա, թե դա ով ա, ինչ ա: Մարդիկ, սովորաբար, հատկապես մեր մշակութային արեալում՝ տեսնելով նաև Արևմուտքը, Ռուսաստանը, և այլն, սովոր են կարծել, որ ինչ-որ հասկացության հետևում ինչ-որ առարկա կա: Ասենք, մենք ասում ենք աթոռ հասկացություն, երևակայում ենք աթոռ: Ասում ենք բժիշկ հասկացություն, երևակայում ենք մարդկանց: Բայց

էն փաստը, որ մի մարդը կարող ա լինել և՛ բժիշկ, և՛ հիվանդ, մեզ մի քիչ արդէն դժվար ընկալելի ա: Կամ կարող ա լինել և՛ բժիշկ, և՛ ատաղձագործ:

Դահլիճ 12:59 Մայր աթոռ՝

Գևորգ 13:01 Աթոռ ասելով կարող ենք հասկանալ Մայր աթոռ, դիվան ասելով կարող ենք հասկանալ գահ: Կամ Օսմանյան Թուրքիայի բարձրագույն իշխանությունը՝ Բարձր Դուռ և այլն, և այլն: Բայց միշտ առարկայացնելու միտում կա: Այս մարդը բժիշկ ա, այն մարդը բժիշկ չի: Բայց եղպես չի, չէ՞: Մարդը բացի բժիշկ լինելուց նաև էս ա, էն ա, էն ա, էն ա: Եվ բժիշկ կարող ա լինել ոչ բժշկական կրթություն ստացած մարդը: Կարող էս ասել, էս կատուն ինձ բժշկեց, որովհետև դրեցի ցավոտ տեղին ու ցավս անցավ: Կատուն էդ պահին բժիշկ դարձավ: Նույն կերպ էլ քաղաքացիական հասարակությունն է: Դա մի բան ա, որ ոչ թե առարկա է, որ ասենք, թե էսքան մարդիկ իրան պատկանում են, էսքան մարդիկ չեն պատկանում: Դա մարդկային մի վիճակ ա, որ նույնիսկ նախարարը կամ գործարարը ինչ-որ պահի կարող ա լինել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, իսկ ինչ-որ պահի լինել կառավարության կամ բիզնեսի ներկայացուցիչ: Այսինքն քաղաքացիական հասարակությանը պատկանելը ոչ թե առարկա ա, այլ վիճակ: Դա մի դիտարկում:

Իսկ ինչպե՞ս ա որոշվում՝ ինչն ա, գործունեության որ տեսակն ա, որ քաղաքացիական հասարակությանն ա պատկանում: Բավական բարդ հարց ա ու մեր աշխարհից գրեթե ոչ ոք չի հասկանում: Ուրեմն ասում են, որ քաղաքացիական հասարակությունը այն է, ինչ բիզնես չէ, քաղաքական, պետական, կառավարական գործունեություն չէ, և սեփական ընտանիքիդ, ազգականներիդ, կլանիդ օգնելու գործունեություն չէ: Այսինքն այն է, ինչ այս ամեն ինչից դուրս է: Էստեղ էս նշեմ գործունեություն, բայց պիտի հասկանանք, որ խոսքը մարդկային տեսակի մասին չէ, այլ հենց գործունեության տեսակի: Այսինքն տեսե՛ք: Բիզնեսի անունը փողն է: Ուրեմն դա շահույթի հետ կապ չունեցող բան է: Քաղաքականության անունը իշխանությունն է՝ հրամանին ենթարկվելը: Իշխանության ամենակարճ ձևակերպումը կլինի հետևյալը: Այն թույլ է տալիս ինչ-որ մեկին հրամայել մեկ ուրիշին և այդ հրամանը կկատարվի: Եվ այդ մեկ ուրիշը կանի այն, ինչ նա այլապես չէր անի, եթե այդ հրամանը չլիներ: Ուրեմն քաղաքացիական հասարակությունը իշխանություն և հրաման չէ, ինչպես նաև ազգակցական պարտավորություն, արժեք ու կապ չէ: Եվ ամենից շատ հենց սրա վրա ենք սխալվում:

Օրինակ, էս եղել եմ այնպիսի քննարկումների, երբ ասում են՝ գիտեք ինչ, մեզ մոտ՝ Հայաստանում, ՀԿ-ները եղբան զարգացած չեն, որովհետև մեզնից ամեն մեկը իր շրջապատի, իր ազգականի մասին է մտածում: Եթե մի մարդ է, ով աշխատանք ունի, նա նայում է և՛ իր ընտանիքի անմիջական անդամներին, և՛ իր զավակների խնամքն է հոգում, և՛ իր կնոջը, որովհետև շատ հաճախ կինը աշխատանք չունի, և՛ իր ազգականներին է օգնում: Այդ դա, ասում են մարդիկ, մեր քաղաքացիական հասարակությունն է: Չէ, եղպես չի: Դա քո պարտավորությունն է որպես անձ, որը ունի ազգակցական պարտավորություններ, պարտականություններ: Քաղաքացիական հասարակությունը այն է, որ ո՛չ քո ազգականներին է օգնում, օգնում է ո՛չ շահույթի նպատակով, որովհետև բիզնեսն էլ կարող է ասել, որ ինքը քաղաքացիական հասարակություն է և օգուտ է տալիս՝ զարգացնում ա: Շատ

լավ, բայց դա չի: Քաղաքացիական հասարակությունը օգնում է առանց իշխանության գալու միտման, որովհետև իշխանության գալը նույնպես շատ արդար ցանկություն է: Մարդը կարող է բարեգործություն անի, որպեսզի իրեն հետո քվե տան: Դա չի քաղաքացիական հասարակության գործունեությունը: Դա այն է, ինչ նշավծները չէ: Բնականաբար սա առնչվում է էսպես կոչված ալտրուիզմ հասկացության հետ, որը էգոիզմի հակառակն է: Համարվում է, որ նշված բոլոր դեպքերը էգոիստական էլեմենտ ունեն իրենց մեջ: Մա էլ շատ հակասական իրադրություն է, որովհետև լավ գիտնականները ասում են, որ ալտրուիզմն էլ է էգոիզմ: Ինչպե՞ս կարելի է մեկնաբանել, որ ալտրուիզմը էգոիզմ է:

Դահլիճ 18:50 Էգոիզմ է բայց դրական:

Գևորգ 18:53 Կամ բացասական: Էգոիզմը նշանակում է շահի կուտակման նկատմամբ գործունեություն ցանկացած ձևով: Ալտրուիզմը նշանակում է միևուսի վրա:

Դահլիճ 19:11 Ես գտնում եմ ալտրուիզմը կարող է փոխակերպվի էգոիզմի, որովհետև եթե դու երկար ժամանակ մի բան անես, ու հետո հանկարծ չանես, էդ մարդը կմտածի, որ դու արդեն պարտավոր ես դա անել:

Գևորգ 19:37 Լավ: Էստեղ ալտրուիզմի ու էգոիզմի միջև ռացիոնալ հատիկը այն է, որ ինչ էլ անում ես, պետք է անել այնպես, որ նպատակիդ հասնի:

Դահլիճ 20:08 Իմ կարծիքով ալտրուիզմ և էգոիզմ ասածները ինչ-որ նպատակ են իրենց մեջ պարունակում: Եթե էգոիզմ է, ապա տվյալ անձը իր մասին է մտածում և էդ եկամուտը և օգուտը ինչ-որ կա, դեպի իր կողմն է գնում: Իսկ ալտրուիզմի ժամանակ, եթե ես ինչ-որ բան եմ կատարում, օգուտը կամ եկամուտը գնում է հասարակությանը: Էդ դեպքում հասարակությունն է էգոն:

Գևորգ 20:30 Շատ լավ: Այո, այո:

Դահլիճ 20:37 Իմ կարծիքով էգոն բավարարվում է մի քանի ձևով: Մեկը այն է, որ անում ես ինչ-որ բան, որ միայն քեզ է օգուտ, մյուսին՝ վնաս: Մյուսը իր էգոն բավարարում է ուղղակի իրեն հաճույք պատճառելով: Եթե ես ասենք նվեր եմ առնում մամայիս համար, ես դրանով ոչ միայն իր էգոն եմ բավարարում, այլև իմ էգոն:

Գևորգ 20:57 Այո: Ապրեք, որովհետև էն բոլոր տարբերակները, որ ես գլխումս ունեի փաստորեն վերարտադրեցիք: Գայանեն էլ ա ուզում ինչ-որ բան ասի:

Գայանե 21:08 Մի տարբերակ էլ ալտրուիզմը էգոիզմի վերածելու կարող է լինել, որ երբ որ մարդը անընդհատ բարեգործություն է անում և տալիս է անմնացորդ, դասում է իրեն ավելի բարձր, քան նրանք, ով շահույթ են ստանում: Որովհետև անընդհատ տալը նշանակում է, որ ես ունեմ տալու, իսկ դու չունես ու ես քեզ անընդհատ տալիս եմ:

Գևորգ 21:24 Այսինքն ամեն դեպքում ինչ-որ շահ է պահանջում: Տեսե՛ք, էգոիզմը և ալտրուիզմը իրոք միասնական են, պետք չէ միմյանցից առանձնացնել: Ի՞նչ է լինում, եթե իրարից անջատենք: Ի՞նչ է դառնում ալտրուիզմը, եթե անջատում ես էգոիզմից: Ասեմ՝ ֆանատիկություն: Շահիդները՝ տեռորիստները, որոնք պայթացնում են, իրենք

ալտրոսոնոգրաֆիկ եզրակացումներ են, դարձել են ֆանաստիկոս: Ուրեմն չի կարելի իրարից անջատել: Ալտրոսոնոգրաֆիկ համեմատաբար նոր հասկացություն է մարդկանց մեծ մասի համար՝ չընդունված, վիճելի: Մարդիկ համարում են, որ եզրակացում է ամենը շարժում, բայց ճիշտը համամասնորեն նրանց վերաբերելն է: Եթե հիշում եք, ինքնաթիռի վայրէջքի ժամանակ, վարժություն են անում, որ եթե հանկարծ բան պատահի, պատրաստ լինեն ուղևորները: Ասում են, որ երբ թթվածնային դիմակը իջավ, սկզբում դրեք ձեր երեսին, հետո՝ ձեր երեխայի: Ինչի՞, որովհետև սխալ ալտրոսոնոգրաֆի դեպքում դու կուզես երեխայիդ փրկել, բայց մինչև դնես, դու արդեն շնչահեղձ կլինես: Բայց եթե արագ դրեցիր քեզ, կհասցնես նաև նրան: Նաև այն պատճառով, որ երեխան քանի որ քիչ է հասկանում, թե ինչ է կատարվում, ավելի մեծ հնարավորություն ունի դիմանալու առանց կորուստների, քան մեծահասակը, որը կարող է պանիկայի մեջ ընկնել, և այլն:

Հիմա մյուսը: Ինչպես էլ մենք էստեղ մեկնաբանենք ալտրոսոնոգրաֆի օգուտը՝ լինի դա հասարակության համար, թե այլ բանի, կա մեկ մեկնաբանություն ևս՝ ալտրոսոնոգրաֆի մեծ ռազմավարական եզրակացում է: Այսինքն, դու այսօր օգուտ չես ստանում: Բիզնես մտածողությունը միշտ կարճ է: Նա հիմնականում ուզում է շահույթ ստանալ այսօր և հիմա: Շատ հանգամանքներ են պետք եղել աշխարհի զարգացման, որպեսզի բիզնեսը դառնա ավելի խոհեմ, ավելի իմաստուն մտածողություն ունենա: Եվ կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, որ ասում են՝ դրա հետ է կապված: Ասենք, հասկանում է, որ եթե ինքը օգուտ բերեց իր շրջապատին խանութպան լինելով, ում խանութը գյուղի կենտրոնում է, եթե նա ասենք, կանաչապատեց իր շրջապատը, օգուտ բերեց, որը իրեն ուղղակի օգուտ չի տալու՝ նա ապրանքը չի վաճառում, այլ ծախս է անում, բայց իր նկատմամբ հարգանքը կավելանա և իր խանութը ավելի շատ հաճախորդներ կունենա և կօգտվի դրանից: Այդ մտածողությունը բիզնեսի մեջ այդքան էլ տարածված չի, ամեն տեղ տարածված չի: Այն բավական նոր է որպես համաշխարհային օրենք, բայց ինչ-որ մշակույթներում բավական հին է եղել: Դրա համար էլ էդ մշակույթները հաջողակ են: Ալտրոսոնոգրաֆի դրա պես մի բան է: Այսինքն դու մտածում ես հեռակա օգուտի մասին: Հայերենում մի շատ լավ ասացվածք կա, որը դրա մի քիչ հակառակ իմաստն էլ է պարունակում, ինչպես շատ ասացվածքներ՝ *լավություն արա, ջուրը գցի*: Ես դրա շարունակությունը սենց եմ մեկնաբանում, որ *ջրի վերևի հոսքը քեզ էլ մի լավություն կբերի*: Եվ եթե ասենք բոլորն են լավություն անում ու ջուրը գցում, ապա բոլորն էլ սկսում են դրանից օգտվել:

Շատ լավ: Քաղաքացիական հասարակություն: Իրա օբյեկտիվացված, առարկայացված մաս էլ կա, ինչպես բժիշկի դեպքում կա հիվանդանոց՝ բժիշկ-հիվանդանոց՝ ուղղակի կապ է: Նույնկերպ քաղաքացիական հասարակություն, հասարակության ներկայացուցիչ, իր ամենաօբյեկտիվացված մասը մենք էսօր անվանում ենք ՀԿ՝ հասարակական կազմակերպություն կամ ՔՀԿ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություն: Մեր օրենսդրությամբ կան ՀԿ-ներ և հիմնադրամներ, որոնք միասնաբար ՔՀԿ են անվանվում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություն: Էդ իրա օբյեկտիվացված վիճակն ա:

Հիմա ես ձեզ մի բան ասեմ, որը շատ ավելի վիճելի ա, քան այն ամենը, ինչը մինչև հիմա էի ասում: Սա իմ կարծիքն ա արդեն: Մինչև հիմա ես ձեզ հետ քիչ թե շատ կիսում էի

գիտությունը, էն ինչ-որ կա աշխարհում արդեն: Հիմա ես մի ուրիշ բան եմ ուզում ասել: Իմ կարծիքով և՛ Հայաստանում, և՛ աշխարհի զարգացած մասում ամենաակտիվ, ամենաճկուն, ամենաստեղծագործ կազմակերպությունները հիմա ՔՀԿ-ներն են: Եվ դա վերաբերում է և՛ համալսարանական կառույցներին, և՛ ակադեմիական կառույցներին, և՛ հետազոտական կենտրոններին՝ think-tank-երին, և՛ այլ տեղերին: Որտե՞ղ է, որ մտածում են աշխարհի ապագայի մասին: Նախևառաջ ՀԿ-ներն և պետությունները: Պետությունները ունեն մեծ ռեսուրսներ դրա համար, որովհետև գանձում են մեր հարկերը և կարող են ծախսեն, ունենան մի հատ գրասենյակ, որտեղ մտածեն, թե ոնց կարող են աշխարհը փոխեն: Բայց շատ հաճախ, մասնավանդ էն պետություններում, որտեղ պետությունները էդքան խելքը գլխին չեն, էդ ֆունկցիան կատարում են ՔՀԿ-ները: Դա կարող ա լինել անկախ համալսարան, նույնպես որպես քաղաքացիական հասարակության կառույց: Կան ինչ-որ օրգաններ, որոնք մոտիկ են ՔՀԿ լինելուն, թեև կարող ա իրենք պաշտոնական կերպով բիզնես լինեն: Օրինակ՝ մասնավոր համալսարանները և ոչ պետական լրատվամիջոցները, որոնք պետական բյուջեից չեն սնվում՝ մասնավոր են, բայց իրենց մասնավորության նպատակը ավտրոիզմն է:

Համալսարանը կրթված մարդ է արտադրում, որի օգուտը դեռ չգիտի ու էդ օգուտը համալսարանին չի գալու: Ինքը կարող է փողով դա անել, բայց էդ փողը իրեն պետք է, որ ինքը կարողանա իր գործը անել, ոչ թե շահույթ կուտակի: Այսինքն կան կազմակերպությունների որոշակի կատեգորիաներ, որոնք բիզնես են պաշտոնական իմաստով, բայց շատ մոտիկ են կանգնած ՔՀԿ-ներին: Եվ ստացվում է, որ մարդս մենակ է, մենք էդ գիտենք: Մարդս իրա ներսում շատ մենակ անձնավորություն է: Կարող ա ազգականությունը, ընտանիքը մի քիչ օգնի, բայց կարող ա նաև կաշկանդի: Մարդս մենակ է: Եվ ես հիշում եմ, որ իմ առաջին հայտնություններից մեկն է, երբ Հայաստանը անկախ էր դառնում 1990-1991 թվականներին, երբ ես թերթերից մեկում տեսա Վազգեն Մանուկյանի հարցազրույցը, որտեղ նա ասաց, որ այսօրվա աշխարհը կազմակերպությունների աշխարհ է: Ասաց՝ թիմերով գործելու աշխարհ է, կազմակերպությունների աշխարհ է: Մենակ մարդը շատ քիչ բան կարող է անել այսօրվա աշխարհում:

Դահլիճ 29:15 Միքայելի հետ մենք դա խոսեցինք:

Գևորգ 29:26 Դե հա, ես չեմ լսել, չգիտեմ, բայց շատ նախորդ և հաջորդ խոսողների հետ զուգահեռներ կլինեն, գուցե և հակասություններ: Ուրեմն, կան պաշտոնապես գրանցված ՔՀԿ-ներ, կան ինչպես ասացի, բիզնեսներ, որոնք ՔՀԿ-ություն են անում, կան չգրանցված ՔՀԿ-ներ: Օրինակ Երիտասարդական Բանկը շարժում է: Դա գրանցված ինչ-որ կազմակերպություն չէ, բայց դու կազմակերպության մեջ ես իմաստավորվում: Կարող ա լինի՝ երկու տարբերակ: Կարող ա իմաստավորվես բուրգի մեջ՝ որպես բուրգի փոքրիկ մասնիկ՝ ինչ-որ ակ, որը աշխատացնում ա մյուս ակը ու կարող ա իմաստավորվես ուրիշ ձևի: Կարող ա իմաստավորվես ամպի մեջ: Քո կազմակերպությունը, կազմակերպությունների շարքը լինի ամպ, որտեղ չկան հիերարխիաներ, որտեղ դու ինչ-որ ձևի՝ լինի դա քառտիկ կամ ինչ-որ կազմակերպչական սկզբունքներով, անում ես ինչ-որ գործունեություն և ինչ-որ նպատակների ես հասնում: Կազմակերպությունը կարող ա լինի շատ օգնող, կարող ա լինի

խանգարող: Բուրգացված կազմակերպությունը ինչքան օգնում ա, էնքան էլ խանգարում ա, որովհետև թույլ չի տալիս, ազատությունդ սահմանափակում ա:

Էստեղ կա հիերարխիա, հրամաններին ենթարկվել կա, և այլն, և այլն: Ամպային կազմակերպությունը շատ ավելի ազատություն ա թույլ տալիս, բայց երբեմն արդյունավետությունն ա կորում: Բուրգի ծայրը սուր ա: Եթե պատերազմ լինի, կարող են միասին շարվեն, գնան, խփեն, ջարդեն: Ամպի պարագայում կարող են շատ լավ մտքեր գեներացվեն, իրար հետ շփվեք, բայց միասնական գործը, արդյունքը դժվար ա տեղի ունենում: Շատ լավ օրինակ ա էն, որ եթե ուզում են ինչ-որ Flash-mob անեն կամ ինչ-որ շարժում սկսել, ինչպես ասենք *Էլեկտրական Երևանն* էր: Facebook-ով երբ տարածում են լուրը, կամ թեկուզ հրավիրում են որևէ պրեզենտացիայի, լուրը տարածում են ու միշտ էսպիսի համամասնություն ա առաջանում: Ասենք դու տարածեցիր 5000 հոգու, որից ասենք 3500-ը like տվեցին, որից , ասենք 1500-ը ասեցին, որ կգանք, որից 100-ը նախորդ օրն էլ ասեցին, որ անպայման գալու ենք, հետո գալիս ա 56 հոգի: Դա շատ տիպական ա: Ամպային կազմակերպվածության խնդիրներից մեկն ա:

Ինչպես՞ ա էդ հարցը լուծվում: Ես չգիտեմ: Երբ որ ինձ հարցնում էին, թե ինչու էլեկտրական Երևանը ինչ-որ չափով հաջողություն ունեցավ, ինչ-որ չափով անհաջողություն ունեցավ, ինչ կարելի էր ուրիշ ձևի անել, ավելի էֆեկտիվ անել: Ես դրա պատասխանը չունեմ, որովհետև էդ անկազմակերպ շարժումների տրամաբանությունն հասկանալը շատ դժվար է: Իրենք չեն ուզում կազմակերպվել, բուրգանալ, հիերարխիկանալ: Չեն ուզում գրանցվել որպես ՀԿ կամ որպես քաղաքական կուսակցություն կամ ինչ-որ կառույց: Իրենք խորշում են դրանից: Բայց իրենք միևնույն ժամանակ ունեն էֆեկտիվության հետ կապված խնդիր՝ մեկը ասում ա գնանք օպեռա, մյուսը ասում է՝ չէ մնանք Բաղրամյան: Չգիտեն՝ ով ուր ա գնում, ինչ ա անում ու ժողովուրդը մնում ա անորոշ:

Ուրեմն ի՞նչ ձևեր կան: Ես միայն մի պատասխան ունեմ՝ պատասխանի սկիզբ, որը մեզ մոտ առաջացավ, երբ Միքայելը դեռ շատ փոքրիկ էր, բայց իր հայրիկի ու մայրիկի հետ միասին, 89 թվականին՝ արդեն դողողացող Խորհրդային Միությունում, արդեն Ղարաբաղյան շարժումը սկսված ժամանակ, կոմերիտ միությունը, որի մասին, ես արդեն նշեցի, մեզ առաջարկեց անել մի կրեատիվ խաղ «*Երիտասարդական շարժումների ապագան*» թեմայով: Իրենք արդեն հասկանում էին, որ չգիտեն, թե ուր ա գնում: Կրեատիվ խաղը նշանակում ա, որ ձեզ պես լիքը մարդ հավաքվեն , որոշակի մեթոդաբանությամբ քննարկում էին էդ հարցը, թե ինչպիսին են լինելու երիտասարդական շարժումները: Ու մենք եկանք մի եզրակացության, որը կոչվեց սահող գեներալի սկզբունքը: Ու շատ հետաքրքիր ձևով, երբ ես ծանոթացա երիտասարդական բանկի գործունեությանը, տեսա, որ մոտավորապես նույն ձևի հենց էս ծրագիրն ա աշխատում:

Ինչ է այդ սկզբունքը: Մենք ասեցինք, որ էլ չի լինելու մեծ, համատարած երիտասարդական շարժումներ կոմերիտ միության պես, որը աշխարհի մեկ վեցերորդը ծածկում էր: Լինելու են շատ ու բազում, քառտիկ շարժումներ, ազատ ստեղծվող: Իրենք լինելու են փոքր, կարող ա ինչ—որ ժամանակ մեծանան, բայց իրենք նաև լինելու են նպատակաուղղված: Այսինքն երբ որ նպատակը իրագործվեց, իրանց վերափոխվելու են, էլ չեն մնալու: Քառտիկ, շատ, տարբեր,

մեծացող-փոքրացող, կյանքի տարբեր կտորներ ունեցող շարժումներ: Եվ ասեցինք, որ էդպիսի նոր կազմակերպության կորիզը լինելու է առանց որոշակի անձի, որը գազաթին կլինի՝ առանց Պուտինի: Լինելու են 5, 6, 7 որոշակի անձեր, որոնք հավասարազոր վիճակում են լինելու և նրանցից յուրաքանչյուրը ընդունելու է այն դերը, որը նա կարող է ընդունել և որը տվյալ պահին պետք է: Ինչպես օրինակ, մեկը շատ հաջող է գաղափարներ տալով: Մենք նրան կոչում ենք գաղափարների գեներատոր՝ գաղափարներ ծնող անձնավորություն: Բայց ինքը էնքան էլ հաջող չի իրագործելու մեջ: Ինքը գաղափարները շարում, թողում, մի կողմ է քաշվում: Մյուսը հաջող է իրագործելու մեջ: Նա սիրում է մինչև վերջ, ծայրից ծայր, առանց որևէ բան մոռանալու իրագործել՝ որոշել ենք մի բան անել, ուրեմն պիտի մինչև վերջ անենք: Սա իրագործող է: Երրորդը քննադատ է: Նա անընդհատ գաղափարն է քննադատում կամ նայում է, արդյոք իրագործողը լավ է իրագործել, թե՞ չէ: Դեստրուկտոր է իրականում: Նա շատ ներվայնացնում է բոլորին: Նա անընդհատ չի համաձայնում, բայց էս խմբի մեջ շատ կարևոր դեր է կատարում: Չորրորդը տանկ է: Նա դրսի աշխարհում ունի ենպիսի կապեր, որ այն գաղափարը, որ գեներատորը ծնեց, բայց իրագործողը չէր կարող իրագործել, որովհետև դրսի հետ կապեր են պետք: Չորրորդը՝ տանկ լինելով, կարող է գնալ հասնել, էդ կապը բերել, կապել և իրագործմանը օգնել: Հինգերորդը կոնստրուկտոր է՝ կառուցողական է, հենց կառուցողական բառը հուշում է: Նա լսում է ամեն մեկին, որովհետև գեներատորը կարող է հաճախ մի բան ասել, որը ուրիշները չեն հասկանա: Շատ արտարակտ լեզվով: Նա լսում է գեներատորին, հասկանում է իրագործողի մտահոգությունը, մտածում՝ ինչպես տանկին օգտագործեմ, ինչպես՝ դեստրուկտորին, և կազմում է սխեմա, այսինքն է գլուխկոտրուկի գլուխները իրար է բերում, և ասում է, թե ինչ պիտի անեն բոլորը և ինչ հաջողականությամբ: Նա կոնստրուկտորություն է անում: Եվ էսպես կարելի է շարունակել: Կարող են լինել շատ տարբեր բազում ֆունկցիաներ, բայց սրանք գլխավորներից են, առանց նրանց չի աշխատի էդ մեխանիզմը:

Հիմա պետք ա հիշել էն բանը, որը ասում էի ՔՀԿ-ների մասին, որ ոչ թե մեկը ամբողջ կյանքում գեներատոր է և վերջ: Մարդ իր կյանքի մի պահի կարող է լինել գեներատոր, մի պահին՝ կոնստրուկտոր, երրորդին՝ դեստրուկտոր՝ նայած իրադրությանը, նայած իր զարգացման ուղեծրին: Նա կարող է կատարել տարբեր ֆունկցիաներ: Երկրորդ հանգամանքը այն հարցն է, թե ով է առաջնորդը: Պարզ է, որ սա կոլեկտիվ լիդերության օրինակ էլ է, բայց պետք է, որ ինչ ձևի, ինչ-որ սկզբունքով որոշվի, թե երբ սկսենք ու երբ դադարենք: Էդ սկզբունքը մենք կոչեցինք սահող գեներալի սկզբունք: Այսինքն առաջնորդի ֆունկցիան, նույնպես, նայած իրադրությանը՝ շարժական է: Սկզբում մեկն է, հետո մյուսը՝ նայած, թե ում դերն է ավելի ակտուալացած: Այն պահին, երբ պետք է գաղափարներ մակաբերել, գեներատորի դերն է ակտուալացած, երբ պետք է արտաքին աշխարհի հետ շփվել, տանկի դերն է ակտուալացած, այն պահին, երբ պետք է գործը հավաքել, տեսնել՝ ինչ ենք անելու, կոնստրուկտորի դերն է ակտուալացած: Էդպես բարյացակամ և միմյանց հետ համաձայնեցված փոխվում է առաջնորդի դերը:

Դա կոչվում է սահող գեներալ, սահող առաջնորդ: Հիշեցնեմ ձեզ, որ գեներալ բառը կապված էր հայկական առածի հետ այն մասին, որ պարսիկ շահը նստած է, իր վեզիրները գալիս են և ասում՝ թագավորն ապրած կենա, հայերի բանակը գալիս է: Շահը ուշադրություն չի

դարձնում: Հանգիստ իր համար նստած՝ շարունակում է թեյ խմել տանձակերպ բաժակից: Մի քիչ հետո վեզիքները գալիս են, և ասում՝ թագավորն ապրած կենա, հայոց բանակը գետն անցավ և արդեն մոտակայքում է: Շահը կրկին ուշադրություն չի դարձնում: Մի քիչ հետո ասում են, թագավորն ապրած կենա, հայոց բանակը արդեն ձեր մուտքի մոտ է: Շահը ասում է՝ գիտե՞ք ինչ, եթե ասեիք հայոց գեներալները, ես կհավատայի, բայց երբ ասում եք հայոց բանակը, ես չեմ հավատում: Խորհրդային ժամանակներում սա ավելի համոզիչ էր հնչում, որովհետև հայոց բանակ չկար: Հիմա, որ կա, կարող ա հարցնե՞ք ինչու: Խոսքը նրա մասին է, որ հայերը ինդիվիդուալիստ ժողովուրդ են: Դա ազգային հատկանիշներից մեկն է չէ՞: Այսինքն իրենցից ոչ մեկը չի ուզում մնալ բուրգի ներքևում: Դրա համար էլ թողնում, գնում են: Իրանք ուզում են բուրգի վերևում լինեն և եթե մի եռանկյունիում վերև բարձրանալը չի աշխատում, գնում են ուրիշ եռանկյունի և համեմատաբար ավելի բարձր դիրք են գրավում: Տեսե՞ք՝ Ռուսաստանում, Ամերիկայում, Ֆրանսիայում և այլն, ինչ բարձր դիրքերի են: Ուրեմն դրա համար, քանի որ մեր ազգայինը պետք է հաշվի առնել, մենք որոշեցինք, որ էստեղ չկա բանակ, կան միայն գեներալներ: Ամեն մեկը գեներալ է:

Դահլիճ՝ 41:20 Էս գեներալի սխեմայի մեջ, որ ամեն մեկը կարող են տարբեր դերեր ընդունել, բայց իմ կարծիքով էդ դերերը ինչ-որ չափով կապված են արտաքին աշխարհի փոփոխությունների հետ: Ուզում էի հարցնեի, իրոք արտաքին աշխարհը ինչ-որ ազդեցություն ունի էդ սխեմայի վրա:

Գևորգ 41:51 Ունի, բայց էդ հարցին, որպես ընդհանրական պատասխան սիրում եմ կրկնել հետևյալ խոսքը, որ գալիս է Մաքսիմ Գորկուց: Նա, գիտե՞ք, ռուս գրող է, որը ունեցել է մի քանի կենսագրություն, որովհետև մինչև հեղափոխությունը ինքը հեղափոխության ջատագով էր, հեղափոխությունից հետո ինքը հակահեղափախական էր և երկար տարիներ Իտալիայի Կապրի կղզում էր ապրում: Հետո իրեն Ստալինը հետ բերեց Խորհրդային Միություն և դարձրեց Խորհրդային Միության գլխավոր գրող, և նա սկսեց գովերգել Խորհրդային Միությունը, Ստալինին, Բելամոռ Կանալը, որտեղ սպանում էին կալանավորներին՝ օգտագործելով նրանց ստրկային աշխատանքը: Այսինքն շատ հակասական կենսագրություն է ունեցել Մակսիմ Գորկին, իհարկե, շատ տաղանդավոր գրող է, խորհուրդ եմ տալիս կարդալ հատկապես նրա վերջին շրջանի գործերը: Նա մի շատ խելոք բան է ասել: Ասել է՝ մարդը ոչ թե արտաքին հանգամանքների հանրագումար է, այլ արտաքին հանգամանքներին դիմակայելու հանրագումար է: Այսինքն ինչքանով դու դիմադրեցիր արտաքին հանգամանքներին, էնքանով դու որպես մարդ կաս՝ որպես խումբ, որպես ազգ: Դու քո մեջ պիտի դիմադրողականություն ունենաս: Հրանտ Մաթևոսյանն էլ է ասում մի խոսք, որը էս վերջերս սկսել է բավական շրջանառվել կայքերում: Ասում է՝ թող մի հատ խփեն, տեսնեն, որ մարդ սպանելը դժվար ա: Ես իհարկե բառացի չեմ ասում, Հրանտի ոճը շատ գեղեցիկ ա: Ասում է՝ թող մի հատ խփեն, տեսնեն, որ մարմինդ պինդ ա, կդիմադրես: Ասում է նաև՝ ծառ մի եղիր: Ծառն ա, որ չի դիմադրում, կանգնած մնում ա, կտրեցին, էլ կանգնած չի: Էդ ա իմ պատասխանը: Այսինքն արտաքին հանգամանքները հաշվի առ, օգտագործի, բայց դրանց պատճառով մի տարալուծվի: Միշտ ունեցի՛ր էն կորիզը, որը դու կաս:

Անցնենք առաջ: Անցան տարիներ: Ես եկա Եվրասիա համագործակցություն հիմնադրամ աշխատելու, ծանոթացա Երիտասարդական բանկի հետ, շատ սիրեցի: Ջինիշյան հիմնադրամը ունի իր երիտասարդական ծրագիրը՝ դեբատներ, և այլն: Որոշեցինք միասին մի միջոցառում անել և արեցինք կրեատիվ խաղ: Մի տեղ, որը հետո դարձավ անպատվաբեր: Մենք արեցինք այդ կրեատիվ խաղը Սևանի ափին գտնվող Հարսնաքար հյուրանոցում: Հետո տեղի ունեցավ ոչ Սևանի ափին գտնվող Հարսնաքարի դեպքը, որից հետո ժողովրդի մի ստվար զանգված հրաժարվեց այլևս Հարսնաքարներ գնալ ընդհանրապես: Բայց մինչ այդ դեռ նման բան չկար: Ճիշտ ա, ցուրտ էր, ձմեռ, փետրվար, շատերը հիվանդացան, բայց շատ հետաքրքիր խաղ եղավ: Եվ մեր էր խաղի արդյունքներից մեկը էն էր, որ մենք ստեղծեցինք մի բան, որը կոչվեց «արտակարգ սիրուն խմբակոծիչ»: Ձեր պես երեխաներ էին, իրենց հետ միասին խմբում աշխատում էինք: Ժամանակին ավելի մեծահասակներ էին:

Ուրեմն ի՞նչ էր էր «արտակարգ սիրուն խմբակոծիչը»: Դա շատ տարօրինակ մի էակ էր, որը ուներ բազում զլուխներ, բազում ձեռքեր, վիշապի պես մի անձնավորություն: Գուցե և ուներ բազում ոտքեր: Ինչու՞, որովհետև մեր քննարկումների արդյունքում մենք հասկացանք, որ էսօրվա աշխարհը այնպես ա փոխվում, այդ թվում նաև Հայաստանը, որը մարդու լինելու կարիքն էլ ա փոխվում: Այնպես, որ թվարկածս գործառնություն մարդկանցից լինելը շատ լավ բան ա, բայց նրանցից յուրաքանչյուրը պիտի լինի նաև խմբակոծիչ: Գիտակցված ձևով: Տեսեք, սա շատ ավելի կապված ա գիտակցության հետ, քան թե փոփոխության, որովհետև հազար տարի առաջ էլ էր մարդ եղպիսին: Ոչ մի մարդ միայն մի բան չէր, միայն մի փոքրիկ մասնիկ չէր բուրգի համակարգի մեջ: Ամեն մարդ կարող է լինել մայր կամ հայր, քույր կամ եղբայր, միաժամանակ նաև երեխա, որդի կամ դուստր, գյուղացի, որը տարբեր գործեր է անում՝ գիտի՝ ինչպես նայել եզներին և գիտի՝ երբ է ծաղկելու խնձորենին: Ամեն մարդ էլ բազմաշնորհ էություն ունի: Մարդկությունը ընդհանրապես եղպիսին ա, բայց մեր գիտակցությունն ա հիմա հասկանում, որ մենք էր բազմաշնորհությունը պիտի շատ ուժեղ հաշվի առնենք մեր ամեն քայլը պլանավորելիս ու զարգացնենք: Դրան ա վերաբերում ասենք էն, ինչով, որ մեր Վարուժանն ա զբաղվում: Ինքը զբաղվում ա Lifelong learning-ով: Կյանքի ամբողջ ընթացքում անվերջ ուսուցման հարցերով:

Այսինքն մարդիկ հիմա մի քանի անգամ են ուսուցում ստանում, տարբեր մասնագիտություններ են ձեռք բերում, թարմացնում են իրենց գիտելիքը: Հնարավոր չի մի հաստ գիտելիք ձեռք բերել ու մնալ եղպիսի մարդ: Այ տեսե՛ք, հիմա Ռուսաստանում Պուտինը ուզում ա եղպիսի մի բան անի: Դուման ուզում ա օրենք ընդունի, որ եթե ասենք, դու չունես թարգմանչի դիպլոմ, դու չես կարող թարգմանիչ աշխատել: Այսինքն սա վերադարձ ա էն ճորտատիրական համակարգին, որ եթե դու պատկանում էիր մի գյուղի և մի ճորտատիրոջը դու չէիր կարող նույնիսկ գյուղից դուրս գալ: Այսինքն ո՞վ է ճիշտ ու լավ թարգմանիչը: Ճիշտ թարգմանիչը նա է, ով բնականորեն տիրապետում ա երկու լեզուներին: Օրինակ խառնածինը, դա վատ բառ ա, իհարկե, բայց մարդը, որը իր մեջ ունի երկու ազգի արյուններ, որովհետև նա մայրիկից ու հայրիկից ընկալել ա երկու հավասարազոր լեզուներ: Օրինակ իմ երեխաները եղպես են: Հայերենը և ռուսերենը նրանց համար հավասարազոր ա: Օրինակ իմ ռուսերենը ավելի վատն ա, թեպետ ես միշտ հպարտ եմ եղել իմ ռուսերենով: Ես գիտեմ անգլերենի լավագույն թարգմանիչների, որոնց մայրը, ասենք թե անգլուհի է, հայրը՝ հայ և

դրա համար նրանք հավասարապես տիրապետում են էդ լեզուներին: Նրանք, սակայն, ոչ մի դիպյում չունեն, որ թարգմանիչ լինեն, բայց նրանք հոյակապ թարգմանիչ են: Հիմա, ըստ էս նոր օրենքի նա էլ իրավունք չի ունենա թարգմանիչ աշխատել, ու բոլոր ասպարեզներում է էդպես:

Այսինքն էթե դու վարորդի վկայական ունես, ավարտել ես վարորդական կուրսեր, դու չես կարող լինել դերասան: Եթե դու չես ավարտել դերասանական կուրսեր, դու չես կարող լինել դերասան: Ես հուսով եմ իհարկե, որ Ռուսաստանը էդպիսի օրենսդրություն չի ընդունի ու էդ ուղղով չի գնա, բայց էդպիսի օրենսդրություն աշխարհի ոչ մի տեղ չկա: Շատ-շատ կարող ա իսլամական պետությունում մեկ էլ լինի: Քանզի կարևոր չի, թե դու ինչ կրթություն ունես: Դու ստանալու ես տարբեր կրթություններ ու անելու ես տարբեր գործեր: Կարևոր ա, թե գործը ոնց ա ստացվում: Ու մենք հիմա ապրում ենք էդ աշխարհում: Իմ քույրերը օրինակ, որոնք հիմա շատ-շատերի պես Լոս Անջելեսում են: Իրենք Հայաստանում կոնսերվատորիա են ավարտել և երաժշտության ուսուցչուհիներ էին: Գնացին Էնտեղ և աշխատում են որպես դայակ՝ ամենատարածված մասնագիտությունը Լոս Անջելեսում հայ կանանց համար: Էդպես է: Ուրիշ հարց է, թե դա լավ է, թե վատ, բայց գիտեք ինչ, ավելի լավ է, որ դայակ կարողանաս լինել, էթե քո կոնսերվատորիան չի անցնում: Այն ժամանակ այնքան դժվար վիճակներ էին, որ ես մի երագանք ունեի 1989-1990 թթ.: Դեռ գրեթե կոմպյուտերներ չկային, ոչ ոք չգիտեր, թե դա ինչ ա լինելու: Ես դեռ փոքրուց շատ լավ էի սովորել տպող մեքենայի վրա աշխատել: Քառտիկ կերպով, ոչ ճիշտ, բայց շատ արագ էի մեքենագրում: Ու ես մտածում էի՝ էթե գործ չունեցա, միշտ կարող եմ մեքենագրել ու փող աշխատել: Էդ էր հույսս: Էն էլ հետո կոմպյուտերները մեջ ընկան, էդ մեքենագրուհու փեշակը փակվեց ու հիմա արդեն շատ-շատ դժվար կլինի: Թարգմանիչ գուցե կարողանամ աշխատել, էթե հանկարծ գործ չունեցա:

Նույնկերպ կան մասնագիտություններ, որոնք ուղղակի վերանում են և անընդհատ նորերն են առաջանում: Օրինակ կար էդպիսի մասնագիտություն՝ մետրամպաժ: Դա մարդ էր, որը հետևում էր, որ երբ տպարանում արձիճով հավաքում են գիրքը, որ այդ տառերը հավասար լինեն: Հիմա արդեն էդպիսի մասնագիտություն չկա, որովհետև այլևս արձիճով տառեր չեն հավաքում: Եվ անընդհատ ստեղծվում են նոր մասնագիտություններ: Օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետը, որը ասենք քսան տարի առաջ որպես մասնագիտություն գոյություն չուներ: Հիմա մարդկանց մեծ մասը դրանով է զբաղվում:

Ուրեմն ստացվում է, որ ծրագրի ստեղծման գործընթացի ամեն կետում պետք է տեղադրվի մի էդպիսի խմբակոծիչ, ու համակարգը էդպես ա աշխատում: Դու ունես բազում մասնագիտություններ ու կարողություններ: Դու պիտի իմանաս, որ դրանք ունես: Պիտի քո մեջ դրանք զարգացնես: Դու քո դիրքը փոխելու ես խմբում, կազմակերպությունում, կոլեկտիվում, թիմում, կատարելու ես տարբեր ֆունկցիաներ: Պարզ է, որ էսպես շահում է նա, ով կարողանում է սա լավ հասկանալ և լավ օգտագործել: Լավ օգտագործել չի նշանակում անել մի բան, ինչից դու զգվում ես: Այսինքն ստիպել, զոռել, որ դառնաս մարդ-նվագախումբ: Թիմը հենց թույլ է տալիս լրացնել ուրիշի ցանկություններն ու բացերը: Թիմում միշտ ճիշտ ձևով կարելի է դասավորել մարդկանց՝ բոլորին ըստ տվյալ պահին իրենց կյանքի լավագույն

շնորհքի, որովհետև կյանքի ընթացքում լավագույն շնորհքը կարող է փոխվել և դառնալ ուրիշ: Տեսնեմ՝ ինչ որ կարևոր բան մոռացել եմ, թե չէ՞ և ավարտեմ:

Վերջին բանը, որ ուզում էի ասել, հանրային մասնակցության և տեղական ինքնակառավարման հետ է կապված: Դա էլ մի քիչ ուրիշ բան և մինչև հիմա խոսացածներիցս, դրա համար գուցե տեղ տամ հարցերի կամ կոմենտարների համար, հետո շարունակենք:

Դահլիճ 53:33 Էդ պատկերը, որ նկարել եք, որ մարդը պետք է ունենա տարբեր հմտություններ, տարբեր աշխատանքներ պիտի կարողանա կատարել, մի քիչ համամիտ չեմ: Էն տեսակետից, որ եթե մի բան ես անում, կոնկրետ մի ուղղությամբ ես զարգացնում, տվյալ բնագավառից ավելի լավ ես և ավելի պրոֆեսիոնալ ես լինում: Բայց տարբեր բաներով զբաղվելուց թերությունները ավելի են շատանում:

Գևորգ 54:00 Ճիշտ է: Էստեղ կան մարդու նախասիրություններ: Կան մարդիկ, որոնք ավելի նեղ ոլորտ են սիրում՝ ես իմ գործը, իմ փեշակը ունեմ, ինձ մի՛ խանգարեք: Կան նրանք, որոնք ավելի լայն սփռված են: Լինում են դեպքեր, երբ լայն սփռված լինելը ևս շահեկան չի, որովհետև իրենք գործը մակերեսորեն են անում: Ուրեմն կյանքը բարդ է, բայց սա պետք է հասկանալ ու պատկերացնել ու ամեն մարդ մի գործից ավելի շնորհք ունի: Չկա մարդ-գրիչ: Հիշում եք էդ անեկդոտը: Ասում աս՝ ինչ ես աշխատում, ասում աս՝ ականջ ատաղձագործական արհեստանոցում: Ասում աս ես էն ականջն եմ, որի տակ վարպետը գրիչն աս դնում: Տենց բան չկա:

Դահլիճ 55:09 Էն ժամանակ գրիչ էին անվանում նրանց, ովքեր գրել գիտեին:

Գևորգ 55:13 Բայց հիմա բոլորը գրել գիտեն, բոլորն են գրող: Իհարկե քո ամենագլխավոր, ամենալավ մասնագիտությունը, որին դու նվիրված ես, ոչ մի դեպքում չի կարելի զոհաբերել, բայց կարողանալ շատ բան անել, միշտ օգուտ աս:

Դահլիճ 55:43 Երբ որ դու տարբեր գործեր ես սկսում անել, ընթացքում դու քոնը գտնում ես: Կարող աս սկզբում դա էնքան էլ քոնը չի, բայց հետո զբաղվես դրանով և քոնը գտնես:

Գևորգ 55:55 Այո, շատ տարբեր ձևերով է դա լինում: Դե ձեր մոտ հեշտ աս, ձեր եռանդը մեծ աս: Տարիքի հետ ժամանակը դասավորելը ավելի աս դժվարանում: Շատ մեծ ժամանակ աս պահանջվում մտածել, թե ոնց ես դասավորելու: Ինչքան շատ մտածեցիր, էնքան հետո ավելի լավ աս ստացվում:

Լավ, հիմա վերջին մասը իմ թեմաների, որ ուզում էի ձեզ հետ խոսել: Քանի որ տեղական ինքնակառավարումն է առիթը մեր հանդիպման, հիմա ես կխոսեմ, շատ դժվար վիճակով, շատ դժվար ձևի: Այսինքն ես կանեմ էն, ինչը սովորաբար չի արվում: Խոսում են կամ գիտական լեզվով, կամ ավազքյարա, իսկ գիտականի ու ավազքյարայի մեջտեղը կարելի է հիպոթեզների շարան դնել կամ պարզունակացրած պատկերներ ստեղծել գիտական ինչ-որ կոնցեպցիաներից: Ես հիմա պարզունակացված պատկերներ եմ ստեղծելու գիտական կոնցեպցիաներից: Ուրեմն կա երկու արստրակտ մոտեցում նրան, թե ինչպես է հասարակությունը կազմակերպվում: Մեկը ասում է, որ ներքնից վերև: Բուրգը կարող է շատ

սրածայր չլինի, թող լինի մասնակցային: Եթե նայենք մեր տեղական ինքնակառավարման համակարգը, դա մոտավորապես էդպես ա: Այսինքն կա համայնքի օղակ, հետո գալիս է մարզի օղակը, հետո՝ հանրապետության օղակը, իսկ դրանից վերև արդեն ամբողջ հայության օղակն ա:

Մյուս մոտեցումը էն ա, որ վերևից ներքև ա կազմավորվում: Այսինքն վերևից մեկը հրամայում ա, ասում ա՝ դու կգնաս էնտեղից կղեկավարես: Մարզպետների համակարգի պես, եթե դա մինչև վերջ գնար: Մարզպետը մեկին նշանակում է շրջանի ղեկավար, շրջանի ղեկավարը՝ քաղաքի ղեկավար, քաղաքի ղեկավարից կողքի գյուղի ղեկավար և այդպես վերևից ներքև կազմավորվում է: Ուրեմն հետաքրքիր ա, որ երբ որ մենք նայում ենք աշխարհին, մենք ունենք, դեպքեր, որոնք պատմականորեն ավելի նման են վերևից ներքև գնացող տարբերակին, և դեպքեր, որոնք պատմականորեն ավելի նման են ներքևից վերև գնացող տարբերակին: Օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգները շատ նման են էս ձևին: Կարելի ա ասել՝ նրանց բախտը բերել ա, որովհետև իրանք եկել են նավերով, փախել են նախկին կայսրություններից՝ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Իսպանիայից, Դանիայից և այլն: Եկել են, հնդկացիների հետ սկսել են կռիվ տալ, ոչնչացրել են հնդկացիներին: Իրականում ցեղասպանություն են արել միտումնավոր կամ ոչ, նույնիսկ իրենց բերած բացիլների պատճառով, որ իրենք էլ տեղյակ չէին, նրանց դրել են ռեզերվացիաների մեջ: Մի խոսքով, հնդկացիների քաղաքակրթությունը գրեթե վերացել ա: Իրենք, որ եկել են, էնտեղ ոչ մի իշխանություն չկար: Եկել են ինչ-որ թիմով՝ ազգական կամ օտար, ինչ-որ սկզբունքով իրար հետ միավորված՝ ստեղծել են ապրելու մի փոքրիկ ավան, հետո մի ուրիշ ավան: Հետո հին ավանում ապրողների մի մասը մյուսների հետ կռվել ա, ասել ա, որ էս երկիրը մեծ ա, էս կգնամ ուրիշ տեղ կապրեմ ու էդպես տարածվել ա:

Ես իհարկե պրիմիտիվացնում եմ: Իրական պատմությունը շատ ավելի բարդ ա եղել: Ապրելով ավանում՝ պարզ ա, որ կային բաներ, որ պետք էր կազմակերպել: Ինչպես օրինակ մեր Հայաստանում: Ասենք, թե ով ա ավլելու բակը, որի շուրջ կա 5-7 տուն: Եթե, ասենք, մեկը մյուսին սպանեց, ի՞նչ են անելու սպանողի հետ: Չկա դատարան: Ի՞նչ են անելու: Եվ իրենք որ հարցեր լուծեն, ստիպված են եղել, ամենաներքևի մակարդակից, որը մենք նաև կոչում ենք grass-roots, կազմավորվել: Երբ հարց լուծող չկա, կողքից մի հատ հանցագործ ա գնում լավ զինված՝ մտնում ա ներս, գյուղի ամենաուժեղ տղամարդուն սպանում ա, ասում ա՝ ինչ ունեք-չունեք, բերեք: Էդպես ամբողջ ապրուստը հավաքում ա, թողում, գնում ա: Ի՞նչ անեն: Կարող ա մյուս օրը նորից հանցագործ գա: Մեկ անգամ է էդպես լինում, երկու անգամ, երրորդ անգամ արդեն սովի են ենթարկվում: Իրենց կողքի գյուղը ընդհանրապես վերացավ էր պատճառով: Իրենք առանց այն էլ ավելի վատ էին ապրում, մեկ-երկու անգամ են հանցագործները եկան, քանդեցին և ունեցվածքը վերջացավ: Էն մարդիկ, որոնք կենդանի մնացին, ցրվեցին ուրիշ գյուղեր: Ի՞նչ անել: Հավաքվում են ու շերիֆ են ընտրում որը պարտավոր ա հսկի ու հետևի, ինչպես նաև կամավորների պահակախումբ են կազմավորում, որոնք ևս պարտավոր են հսկել:

Խորհրդային Միությունը, որ փլվում էր և զարգանում էր դարաբաղյան պատերազմը, հայկական բանակ դեռ չկար: Ուստի կամավորները նույն բանն էին անում Ղարաբաղում:

Ուրեմն, ստեղծեցին էդ կայագորը, բայց դա քանդվեց, որովհետև էն հանցագործներն էլ են խելքը գլխին և միայնակ չեն: Աշխարհը կազմակերպություններով և ապրում: Հանցագործներն էլ միավորվում են ավելի մեծ հանցավոր խմբերի մեջ: Նրանք կրկին գալիս են, կրկին ջարդում-թալանում են ու հեռանում: Ի՞նչ անել: Ուրեմն պետք է ինչ-որ բան մտածել: Կարելի և միավորվել գյուղերով, կարելի և մեծացնել կայագորը՝ դարձնելով պարտադիր բանակ: Կարելի և կրթական համակարգ ստեղծել, որ կայագորը սովորի, թե ինչպես պաշտպանվել: Կարելի և պաշտպանական խրամատ փորել, կարելի և զարգացնել նորարարությունը, ստեղծել էնպիսի նոր զենքեր, որ նրանք ընդհանրապես վախենան մոտենալ:

Ինչպե՞ս ես դա անում: Ուրեմն գումարը որ կուտակվում և, որովհետև արդեն միանձնյա հանցագործը չի կարող քեզ թալանի, սկսում և մտոդ մի քիչ հարստություն կուտակվել: Սովորաբար էդ հարստությունը կուտակվում և գյուղի ամենաուժեղ, ամենակատաղած, ամենանամոռոտ օլիգարխի մոտ, բայց եթե մի քիչ շատ և անվտանգությունը շարունակվում, հարստությունը սկսում և շատ կուտակվել, ուզած-չուզած էդ օլիգարխի կողքին մի երկուսն էլ են սկսում հարստանալ: Հարստանալուց հետո էդ օլիգարխը զգում և, որ իրան կարող և գցեն: Ասում և՛ ինչ անեմ որ չգցեն, և որոշում են մի կլոր սեղանի շուրջ հավաքվեն ու քննարկեն: Իրար մեջ սկսում են բաժանել ոլորտները՝ մեկին աղբահանությունը, մյուսին տուգանքները, երրորդին ոստիկանությունը և այդպես իրար մեջ բաժանում են:

Տեսեք, սկզբում հանցագործն էր, որը քոչվոր թալանողն և: Եկավ, թալանեց, թողեց գնաց: Հետո նա փոխարինվում և նստակյաց թալանողներով՝ գյուղի, ավանի տերերով: Միանձնյա նստակյաց թալանողը փոխարինվում և նստակյաց թալանողների խմբով՝ խունտայով: Էդ շատ փոքր հատվածում իրավիճակը ժողովրդավարացավ: Կառավարման մեջ ավելի շատ մարդ սկսեց մասնակցել՝ մի հոգի էր, դարձան հինգ հոգի: Ժողովրդավարությունը էն, երբ էդ հինգ հոգին դարձել են տասը միլիոն: Եթե գիտեք, դա էլի միշտ վերնից ներքև և գնում: Եթե դարձել և հարյուր միլիոն, եթե երկրում հարյուր միլիոն մարդ կա: Ու միշտ վերնից ներքև և դա գնում: Օրինակ Շվեյցարիան, որը հայտնի ժողովրդավարական երկիր և, միայն 1979թ. և կանանց ընտրելու իրավունք տվել:

Այսինքն ժողովրդավարությունը երբեք չի եղել այնպես, որ բոլորը միանգամից ստանան: Միշտ վերնից ներքև, կամաց-կամաց տարածվել և՛ ընդգրկելով նորանոր մարդկանց: Այն պատճառով, որ վերնի նստակյաց հանցագործների խումբը զգում և, որ եթե սրանց չներգրավեց, սրանք իրեն գցելու են: Ինքը իր շահույթի տոկոսը փոքրացնում և, բայց մնում և էլիտա՝ ղեկավար և փոխանցում և իր սերնդին: Էդ պրոցեսը եղպես և տեղի ունենում: Դա Ամերիկայի դեպքում տեղի ունեցավ ներքնից վերև: Էնտեղ Ամերիկայի Միացյալ Նահանգների դաշնային կառավարություն չկար: Հետո կամաց-կամաց կազմավորվեց շերիֆների համակարգի միջոցով: Էդ պատճառով իրանց կառավարությունը քիչ ֆունկցիաներ և կատարում, տեղական ինքնակառավարումը սարսափելի զարգացած և ու կան մի շարք այլ արժեքային տարբերություններ, որոնք մեզ համար տարօրինակ են թվում: Օրինակ, Էնտեղ կապ չունի՝ դու հարուստ ես, թե աղքատ, դու միշտ օգնում ես: Էնտեղ էդ ակտրուիզմը շատ զարգացած և: Միշտ չեմ ասի, բայց շատ հաճախ՝ իննսուն տոկոս

դեպքերում, ինչքան կարող ես, կարևոր չի շատ, թե քիչ, նույնիսկ սիմվոլիկ գումար ես հատկացնում, միջոց ես հատկացնում, կամավորություն ես անում քո համայնքի համար: Ես շատ զարմացա, երբ դեռ սառը պատերազմը նոր էր ավարտվել և ես 1994թ. գնացի Միացյալ Նահանգներ, որտեղ ապրեցի մի քանի տարի: Ես միշտ սիրել եմ մեծ պատկերներ և ուզում էի իմանայի, թե ինչ ա կատարվում մեծ քաղաքականության մեջ և իմ ապրած տեղը, որը մի փոքրիկ համայնք էր, ոչ մի ինֆորմացիա չկար: Էն ժամանակ ինտերնետը դեռ նոր-նոր էր սկսել զարգանալ: Էլեկտրոնային նամակագրությունը կար, բայց ինտերնետ գրեթե չկար: Գրադարան կար իհարկե, որոնք թերթեր էին ստանում նույնիսկ Ռուսաստանից. Շատ ուժեղ գրադարան էր, բայց միևնույն է, ես ունեի ինֆորմացիայի սով: Ես գնում էի թերթեր, բայց էնտեղ ոչ մի խոսք գրած չի, թե ինչ է կատարվում աշխարհում: Գրած էր, որ էսինչ համայնքի, էսինչ մարդը ծննդյան տարեդարձ է նշել, էսքան մարդ է հրավիրել, էսպիսի կատակներ են հնչել և այլն: Էսինչ անդամը որոշել ա ինչ-որ շենք վերանորոգի, և այլն այդպիսին մանր-մունր տեղական նորություններ՝ ինձ համար բացարձակապես ձանձրալի:

Մինչդեռ էդ համայնքի համար դա կարևոր էր. Իրանք էդ թերթը պահում էին, դրա համար վճարում էին և կարդում և տեղեկանում էին: Իրանց համար էդ էր ամենահետաքրքիրը: Հենց մեր կողքին տեղի էին ունենում Դեյտոնյան բանակցությունները Հարավսլավիան մասնատելու և պատերազմը ավարտելու վերաբերյալ: Ոչ մեկը գաղափար չունեց, թե Դեյտոնում ինչ ա կատարվում, անտարբեր էին: Իրանք իրենց համայնքի հարցերով խորապես խորացած անձնավորություններ էին: Համալսարանը ուրիշ էր, որովհետև էնտեղ ուսանողներ կային ամբողջ աշխարհից և Ամերիկայից, որոնք իհարկե նաև այլ հետաքրքրություններ ունեին: Բայց ինձ դա շատ զարմացրեց: Այ էդ կենտրոնացումը սեփական փոքր հարցերի վրա և անտարբերությունը մնացած աշխարհի հանդեպ ճիշտ հակառակն ա, քան թե մեր մոտ: Միշտ խոսում ենք, թե աշխարհում ինչ տեղի ունեցավ, բայց անուշադրության ենք մատնում մեր ոտքերի տակի աղբը:

Ուրեմն ինչպես է ստացվել, որ էնտեղ ներքևից վերև ա գնացել, իսկ մեզ մոտ՝ մեր տարածաշրջանում հակառակը: Տեսե՛ք, եթե վերցնենք Արևմտյան Եվրոպան, ապա նա կարծես մեջտեղում լինի: Միացյալ Նահանգները հստակ ներքևից վերև են: Բրիտանիան և Ֆրանսիան, Շվեյցարիան լրիվ հստակ էդպես չեն, բայց ինչ-որ կերպ հաջողացրել են ստեղծել էդ ներքևից վերևությունը, իսկ ինչքան դեպի արևելք ես գնում, այնքան ավելի վերևից ներքև ա: Դա իմ կարծիքով կապված ա նրա հետ, որ պատմականորեն մեր տարածաշրջանում իշխանությունները վերևից ներքև են դրվել: Այսինքն էս բոլոր տարածքները ինչ-որ պահի, ինչ-որ մեկի կողմից գրավվել ա, այսինքն էն քոչվոր հանցագործը եկել, հաղթել ա: Այսինքն ամեն անգամ եղել ա օտար իշխանություն: Եթե նայենք Թուրքիայի ժամանակակից տարածքը, սկզբում եղել են արաբական արշավանքներ, հետո եկել են սելջուկները, հետո նրանք փոխարինվել են օսմանցիներով, հետո օսմանցիները դարձել են թուրքական ազգ. Այսինքն ամեն անգամ եղել է ինչ-որ օտար խումբ ուրիշ տեղից եկող, որը եկել գրավել է: Ամեն անգամ, երբ գրավում է, ներքևից վերև համընթաց վիճակների արմատը կտրում է: Ինքը սկսում է վերևից ներքև իջեցնել և ինչ-որ պահի իրանք հանդիպում են: Եթե Հայաստանի օրինակը վերցնենք շատ պարզ, մարզպետի և համայնքապետի հանդիպման պահն է, թե որտեղ է ՏԻՄ-ը հանդիպում մարզպետարանին:

Եթե վերցնենք ավելի վատ ու տհաճ գրառված մի դեպք, ապա գիտեք, որ գերմանացիները գրավել էին Ռուսաստանի շատ տարածքներ, էնտեղ կային կոլաբորացիոնիստներ, պոլիցայներ, որոնք տեղականներից էին հավաքագրվում: Գիծը էդտեղից էր գնում: Ֆրանսիայում կար Վիշիի կառավարություն, որը համագործակցում էր նացիստական Գերմանիայի հետ: Մյուս կողմից կար դիմադրություն Շառլ դը Գոլի գլխավորությամբ, որտեղ հայերը օրինակ Միսակ Մանուշյանը շատ մեծ դեր էին կատարում, որոնք պայքարում էին նացիստական Գերմանիայի դեմ: Այսինքն միշտ ստեղծվում է մի պահ, որտեղ քո իրականը՝ ներքևից վերև եկածը, քո կազմակերպածը կտրվում է, և ավելի կամ պակաս կոնֆլիկտուալ ձևերով հանդիպադրվում է վերևից իջեցվածի հետ:

Ի միջի այլոց Ամերիկայում էլ դա տեղի ունեցավ, և շատ ֆիլմերում կարող եք տեսնել, երբ տեղական ոստիկանությունը ինչ-որ հետաքննություն է անում և Հետախուզության դաշնային բյուրոյից գալիս են և նրանց ձեռքից վերցնում են այդ հետաքննությունը: Այս էդտեղ հենց էլ պահն ա՝ վերևից ներքև, թե՛ ներքևից վերև: Սա շատ կարևոր պահն ա: Հենց էստեղ ա, որ հարցը մնում ա չլուծված: Եթե սա շատ ներքև գնաց, ներքևը էլի քայքայվում ա: Ես մի հաստ օրինակ բերեմ, թե ինչքանով ա սա ներքև գնացել: Եթե մենք նայենք Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին՝ սկսած հենց աբխազներից բայց նաև կաբարդինցիներին, էլ չեմ ասում չեչենները: Իրենք ունեն մի հասկացություն, որը Հայաստանում, հայերիս մոտ բավականին լրոգված է, սվաղված է: Այդ հասկացությունը կոչվում է ընդհանուր իրավունք: Ընդհանուր իրավունք ասելով նրանք հասկանում են այն ավանդույթը, որով իրենք իրենց ներսում իրենց արդարության հարցերը լուծելու են առանց դիմելու նախկին խորհրդային, իսկ այսօր ռուսաստանյան իրավական համակարգին: Հենց ասենք արյան վրեժի ավանդույթը, որը արգելված է եղել և՛ խորհրդայինով և արգելված է հիմա: Ուրեմն կա մի իրավունք, որը էս ներքևներում իրանք ոչ պաշտոնական կերպով պահպանել են թաքուն, ավանդույթային և կա էն իրավունքը, որը վերևից իջեցնում ա էս իրան ստիպում ա: Սրանք որոշ պահի իրար են ընդհարվում:

Գևորգ 1:13:38 Դա ավանդույթն ա, և եթե նույնիսկ վերևից վերացնեն, կարող ա չընդունեն էլ նոր օրենքը, չենթարկվեն դրան: Ուրեմն պաշտոնական օրենքի ու ավանդականի միջև էդ անջրպետը կա:

Հիմա, վերջացնեմ խոսքս: Եթե վերցնում ես էս խմբակոծիչին, դնում ես սահող գեներալի կազմակերպության մեջ, կազմակերպությունը դնում ես կառավարման այս ուղղահայացի մեջ՝ համայնքի հիմքում, արմատում ու ինքը սկսում ա գործել և ճիշտ ձև ա գտնում սահմանը բարձրացնելու համար: Ինքն է տերը էս երկրի, էս աշխարհի: Շնորհակալություն:

Մեր տեղական ինքնակառավարման մարմինները ունեն մեծ ինքնիշխանություն, բայց շատ դժվար է դարձել իրենց հասկացնել, որ իրենք կախված չեն մարզպետարաններից կամ պետական մարմիններից: Իրենք ունեն իրենց բյուջեն և պետք է իրենց տեղական ժողովրդին հավաքեն ու մտածեն, թե ինչպես են տնօրինելու այդ բյուջեն: Սա իհարկե կապ ունի ձեր ասածի հետ, որ ավանդույթների, չգրված օրենքների, կարծրատիպերի ազդեցության տակ են մարդիկ:

Միքայել 1:14:57 Ես մի բան ավելացնեմ քո ասած չգրված օրենքների մասով: Չգրված օրենքներն էլ են լինում տեղական ու կենտրոնական ու խնդիրը էն ա, որ կենտրոնական չգրված օրենքները ճնշում են տեղական չգրված օրենքների ձևավորման գործընթացը: Օրինակ, եթե տեղական համայնքները այնքան ինքնավար դառնան և սեփական չգրված օրենքները զարգացնեն, որ սկսեն կենտրոնականին խանգարել, ապա վերջինս կարող ա վերանայել նրանց տրվող գումարների չափը կամ կրճատել դոտացիաները: Էստեղ կա բախում երկու չգրված օրենքների միջև և խնդիրը տեղական չգրված օրենքների զարգացումը և կիրառության մեջ դնելը:

Գայանե 1:16:00 Ես մի հիշեցում եմ ուզում անել և գամ էլի մեր երիտասարդական բանկերին: Նրանք ունեն ամպային կառավարման ձև, սակայն որոշ դեպքերում բուրգանում են: Այդ ծրագրի մասնակիցներից մեկը ասեց, թե ինչու են ընդհանրապես ստեղծվում ՔՀԿ-ները, որ պաշտպանեն մարդկանց, որոնք ընդգրկված են պետական հիմնարկներում աշխատանքի մեջ: Որ նրանց սխալ ինֆորմացիա չտան, սխալ ուղղու վրա չդնեն: Եվ ես կարծում եմ, որ մեր գործում էգոիզմը շատ կարևոր է, բայց էդ էգոիզմը ուղղած ա ուրիշին օգուտ բերելուն:

Գևորգ 1:19:22 Միքայելի և Գայանեի ասելուց հետո կրկնեմ հետևյալը, որը իմ կարծիքով ընդհանուր հայտարարն է: Մեզ բոլորիս անընդհատ շատ շատերը փորձում են խեղաթյուրել՝ ձևավորել: Եթե լավ իմաստով են ուզում ձևավորել, դա լավ է, մենք զգում ենք, մեր մարմինը, հոգին գիտի՝ ուր գնա, բայց շատ հաճախ փորձում են խեղաթյուրել, սահմանափակել, ազատությունից զրկել: Մենք պետք է ամեն կերպ դրան դիմադրենք: Մենք բոլորս լինելու ենք դիմադրության հանրագումարը: Մենք ենք տերը: Եթե մենք չգիտենք ինչ-որ բան, ապա պետք է իմանանք, թե որտեղից դա կարող ենք իմանալ: Բայց դա չի նշանակում, որ մենք իրավունքը չունենք: Մենք ենք տերը մեր համայնքի:

Սղագրությունը՝ Ռոբերտ Ղազինյանի

Սղագրության ավարտը 10.05.2016